

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ

Ֆիզիկական անձի «ՎՏԲ-Մանկություն» ժամկետային ավանդի պայմանագիր թիվ \_\_\_\_\_

Ավանդային հաշվի համար \_\_\_\_\_

Ավանդային պայմանագրի կնքման վայր, ամսաթիվ \_\_\_\_\_

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) ի դեմս՝

\_\_\_\_\_ /Բանկի մասնաճյուղի/ՊՍԲ անվանում/

\_\_\_\_\_ /պաշտոն, անուն ազգանուն/

որը գործում է Բանկի լիազորագրի հիման վրա՝ մի կողմից,

և \_\_\_\_\_ /ավանդատու-մուծող ԱՎՀ/

\_\_\_\_\_ /անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/

կնքեցին սույն պայմանագիրը հոգուտ երրորդ անձ \_\_\_\_\_ /երրորդ անձի ԱՎՀ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/

հետևյալի մասին:

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1 Բանկն Ավանդատուից ընդունում է դրամական միջոցներ /այսուհետ՝ Ավանդ/ և պարտավորվում սույն պայմանագրով և տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով և կարգով Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարն ու հասանելիք տոկոսագումարները:

1.2 Ավանդատուն Բանկում ներդնում է ժամկետային ավանդ՝

արժույթը \_\_\_\_\_

գումարը \_\_\_\_\_ /թվերով/

\_\_\_\_\_ /տառերով/

տարեկան տոկոսադրույթ (․․%) - լողացող.

ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ ՎՏ + 2.00%

ԱՄՆ դոլարով՝ LiborUSD + 6.00%,

Եվրոյով՝ LiborEUR + 4.00%

Ժամկետը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ /օրերով/

Ավանդի ներդրման ամսաթիվը \_\_\_\_\_

Ավանդի վերադարձման ամսաթիվը \_\_\_\_\_

1.3 Ավանդատուն հանձնարարում է Բանկին՝ սույն Պայմանագրի կնքման օրը, սույն պայմանագրի 1.2 կետում նշված գումարը ամբողջությամբ ելքագրել իր Բանկում սպասարկվող թիվ \_\_\_\_\_ բանկային հաշվից և մուտքագրել իր թիվ \_\_\_\_\_ ավանդային հաշվին:

1.4 Տոկոսները վճարվում են՝

տարեկան,

ժամկետի ավարտին՝ տարեկան կապիտալացմամբ:

1.5 Ավանդը լրացուցիչ մուտքագրումներով է և առանց ելքագրումների:

1.6 Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև ավանդի մարման ժամկետից 60 օրացուցային օր առաջ (ներառյալ ավանդի վերադարձի օրը):

1.7 Մինչև երրորդ անձի կողմից ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին բանկին գրավոր արտահայտվելը բանկային ավանդի պայմանագրի կնքած անձը կարող է օգտվել ավանդի հաշվում իր մուծած դրամական միջոցների ավանդատուի իրավունքներից:

1.7 Ավանդի գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

1.8 Սույն պայմանագրի ուժով Բանկը հանդես է գալիս որպես Ավանդատուի հարկային գործակալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով՝ Ավանդատուի ստացած եկամուտներից վճարման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարումների գծով:

**2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

**2.1 Բանկն իրավունք ունի՝**

2.1.1. Ինքնուրույն օգտագործել Ավանդի գումարը:

2.1.2. Իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկացնել Հաճախորդին՝ վերջինիս կողմից տրամադրված հաղորդակցման ուղիով:

**2.2. Բանկը պարտավոր է՝**

2.2.1. Բացել և սպասարկել ավանդային հաշիվը:

2.2.2. Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել Ավանդը և հաշվարկված տոկոսները, փոխանցելով այն Ավանդատուի սույն պայմանագրի 1.3 կետում նշված բանկային հաշվին (եթե առկա չէ Ավանդատուի այլ հանձնարարականը):

2.2.3. Ավանդի գումարը վերադարձնել Ավանդատուին՝ նրա առաջին իսկ պահանջով՝ սույն պայմանագրով նախատեսված պայմաններով:

**2.3. Ավանդատուն իրավունք ունի՝**

- 2.3.1. Տնօրինել իր ավանդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.3.2. սույն պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ պահանջել և ստանալ ավանդը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 2.4. **Ավանդատուն պարտավոր է՝**
- 2.4.1. Պահպանել ավանդային գործառնությունների վերաբերյալ Բանկում գործող իրավական ակտերի պահանջները:
- 2.4.2. Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, անձնագրի կորստի կամ փոփոխության դեպքում 10-օրյա ժամկետում տեղյակ պահել Բանկին:
- 2.4.3. Ավանդը կամ տոկոսները ստանալիս՝ Բանկ ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև լիազորությունները հաստատող փաստաթղթով:

**3. Տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը**

- 3.1. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը՝ պայմանագրված ժամկետին համապատասխան փոխանցվում է Բանկում Ավանդատուի քարտային կամ այլ բանկային հաշվին:
- 3.2. Ավանդի դիմաց տոկոսները հաշվեգրվում են սկսած ավանդի գումարը հաշվին մուտքագրելու հաջորդ օրվանից մինչև ավանդը վերադարձնելու օրվա նախորդ օրը:
- 3.3. Հաշվարկների ժամանակ հիմք է ընդունվում տարվա փաստացի օրերի քանակը:
- 3.4. «ՎՏԲ-Մանկություն» ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման/LIBOR-ի տոկոսադրույքի փոփոխման դեպքում, յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը, Ավանդի տարեկան տոկոսադրույքը ավտոմատ սահմանվում է ՀՀ դրամով ավանդի դեպքում ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման/արտարժույթային ավանդի դեպքում LIBOR-ի նոր տոկոսադրույքին համապատասխան մակարդակի:
- 3.5. Ավանդատուի պահանջով ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում՝ եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը փոքր է 365 /ներառյալ/ օրից Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով: Եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը մեծ է 365 օրից՝ Բանկը կատարում է տոկոսների հաշվարկ պայմանագրի 1.2. կետով նախատեսված տոկոսադրույքով:

**4. Ավանդային պայմանագրի երկարաձգումը**

- 4.1. Ավանդը պայմանագրով պայմանագրված ժամկետում չպահանջվելու դեպքում, այն՝ երկարաձգվում է նույն պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդի համար Բանկում գործող տոկոսադրույքը:
- 4.2. Ավանդատուի ցանկությամբ Ավանդի ժամկետի ավարտից հետո Ավանդը կարող է չերկարաձգվել, այդ դեպքում Ավանդի գումարը հաշվեգրված տոկոսների հետ միասին փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին (եթե առկա չէ Ավանդատուի այլ հանձնարարակաճ):
- 4.3. Տվյալ ժամկետային ավանդի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, ավանդային պայմանագիրը վերածնակերպվում է նույն արժույթով՝ Բանկային (ցպահանջ) հաշվի համար տվյալ պահին բանկում սահմանված պայմաններով:
- 4.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել պայմանագրի 4.1 կետով նախատեսված պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգված ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ, գրավոր , տեղյակ պահելով Ավանդատուին:

**5. Վեճերի լուծման կարգը**

- 5.1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարածայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ավանդատուն հնարավորություն ունի Բանկի և իր միջև սույն պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

**6. Եզրափակիչ դրույթներ**

- 6.1. Սույն պայմանագիրը ձեռք է բերում իրավական ուժ՝ Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:
- 6.2. Ավանդատուն սույն պայմանագրի կնքման ուժով հավաստում է. որ ծանոթացել և համաձայն է «ՎՏԲ-Մանկություն» ավանդի պայմանագրի պայմաններին և Բանկում գործող «Ֆիզիկական անձանց ավանդային հաշիվների բացման և դրանցով գործառնությունների կատարման» կանոնակարգի պայմաններին:
- 6.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

**Ծանուցում**

**Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին**

Հարգելի Ավանդատու, ուշադրություն: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռ.՝ +374 10 58 35 14, ինտերնետային կայք՝ www.adgf.am.

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

**Հատուցման դեպքը**

- Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.
- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը, կամ
- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

**Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը**

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ուշադրություն: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների

Ավանդի արժույթային կառուցվածքը/	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ/	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ/	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ/	
			Եթե դրամային ավանդը 2 միլիոն ՀՀ դրամից ավել է/	Եթե դրամային ավանդը 2 միլիոն ՀՀ դրամից պակաս է/
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը/	4 միլիոն ՀՀ դրամ/	2 միլիոն ՀՀ դրամ/	Երաշխավորվում է միայն դրամային	Երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային

			ավանդը, մինչև միլիոն ՀՀ դրամ	4 բանկային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
--	--	--	------------------------------	--

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդը ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

**Չերաշխավորված բանկային ավանդ**

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- i. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- ii. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- iii. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- iv. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք պայացրել,
- v. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- vi. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

**Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները**

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսներյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը:

Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի:

Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

**Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է**

**Օրենքով սահմանված չափով և կարգով՝**

Երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ),

չերաշխավորված ավանդ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

**Կողմերի հասցեները և ստորագրությունները**

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ» ՓԲԸ

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Մասնաճյուղ/ԴՍԲ

ԱԱ

Կառավարիչ

Անձնագրային տվյալներ

Հասցե

Հասցե

(374 8000) 87-87

Հեռ

Միասնական տեղեկատվական ծառայություն  
headoffice@vtb.am

Էլ-փոստ

Էլ-փոստ

/ստորագրություն/

/ստորագրություն

Կ.Տ.

Գործադրը կատարեց՝